ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԱԼՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի դասախոս

Համառոտ

Հոդվածը նպատակ ունի բացահայտել մանկական գրքի նկարազարդման առանձնահատկությունները՝ հաշվի առնելով դրա նշանակությունը, դաստիարակչական, ճանաչողական և գեղագիտական ազդեցության կարևորությունը նոր ձևավորվող և աշխարհն ինքնուրույն ճանաչել փորձող մարդու վրա: Այստեղ ընդգծվում են կատարողական և գեղարվեստական այն յուրահատկությունները, որոնցով մանկական ստեղծագործությունների նկարազարդումը տարբերվում է մեծահասակների համար նախատեսված գրքերի նկարազարդումից:

Բանալի բառեր. *մանկական գրականություն, գիրք, նկարազարդում, տարիքային խումբ, նկարազարդող, հերոս, կերպար, հեքիաթ, երևակայական աշխարհ, դպրոցական, դեռահաս, մեծահասակ:*

Գրքի նկարազարդման արվեստը կերպարվեստի ինքնուրույն տեսակներից մեկն է: Դա են վկայում միմիայն այդ տեսակին բնորոշ տեխնիկական և ստեղծագործական առանձնահատկությունները: Արվեստի որոշ քննադատներ (մասնավորապես՝ 20-րդ դ.) գրքի նկարազարդման առանձնահատկությունները տեսնում էին միայն տեխնիկական կատարման մեջ՝ համարելով, որ ամենակարևորն այստեղ գրքի էջի, պատկերի և տառատեսակի գրագետ փոխկապակցվածությունն է:

Երբեմն գրքի նկարազարդման դերն ու նշանակությունը բացահայտելու համար տրվում է շատ նեղ շրջանակ ունեցող սահմանում, ինչպես, օրինակ, այն, որ գրքի նկարազարդման նպատակը գրողի միտքը, ստեղծագործության գաղափարը նկարի միջոցով վերարտադրելն է կամ, որ ավելի պարզունակ է, գիրքը կամ գրքի տվյալ էջը «գեղեցկացնելը»:

Իրականում նկարազարդել գիրք՝ նշանակում է նկարի գեղարվեստական արտահայտչականության օգնությամբ հարստացնել և հնարավորինս ամբողջական բացահայտել գրական տեքստը՝ խուսափելով պարզունակ վերարտադրությունից, օգնել ընթերցողին ընկալել գրողի հիմնական միտքն ու ուղերձը և ավելի հստակ պատկերացնել հերոսների բնութագիրը: Այսպիսով, գրքի նկարազարդումը մի կարևոր առանձնահատկություն ունի. այն անքակտելիորեն կապված է գրական տեքստի հետ: Նկարազարդման առաջնահերթ նպատակն է լրացնել, ամբողջացնել և առավել պատկերավոր դարձնել ստեղծագործությունը, հեղինակի պատմությունը, ուղերձը: Եթե նկարչի վրձնած ցանկացած ազատ ստեղծագործություն՝ գեղանկարչական թե գրաֆիկական, որպես կանոն, բացարձակ կերպով արտահայտում է այն, ինչի մասին «խոսում» է նկարիչը, պարունակում է ավարտուն միտք և ընկալվում որպես ամբողջական գեղարվեստական արժեք, ապա նկարազարդումները համարյա միշտ հանդես են գալիս իբրև ստեղծագործությունների շարք, որոնցից յուրաքանչյուրն ընկալվում է որպես ամբողջի մի մաս, և երբեմն, գրական տեքստից դուրս, դիտողի մեջ կարող է անավարտության զգացում առաջացնել կամ անհասկանալի թվալ:

Առհասարակ ինչպե՞ս կարելի է բնութագրել «գրքի նկարազարդում» եզրույթը: Արդյո՞ք այդպես կարելի է անվանել կամ բնորոշել ցանկացած պատկեր, որն այս կամ այն կերպ առնչվում է գրական տեքստի հետ: Եթե այո, ապա նկարազարդումներ են նաև աստվածաշնչյան թեմաներով արված որմնանկարները կամ, առհասարակ, ցանկացած ժեստ, որը կարող է փոխարինել բառին կամ արտահայտությանը: Իրականում, նկարազարդումը չպետք է դիտարկել ձևավորված գրքի համատեքստից դուրս: «Գիրքը շատ տեղին է համեմատել ճարտարապետության հետ. այնպես, ինչպես ճարտարապետական կոթողի հմայքն ու գրավչությունը սկզբում գնահատում ենք դրսից, ճակատից, հետո միայն, ներս մտնելով, սկսում ենք ուսումնասիրել սենյակները, սկզբում՝ առաջինը, հետո՝ երկրորդը և այդպես շարունակ: Նույն կերպ և գրքում նկարիչ-ձևավորողը դիտողին աստիճանաբար տանում է մի ձևավորված պատկերից կամ էլեմենտից դեպի մյուսը»[1]:

Ուսումնասիրելով ձևավորված գիրքը որպես ամբողջականություն, որն իր հերթին ունի համալիր ազդեցություն մարդու վրա, ակնհայտ

1 А. Д. Гончаров, Художник и книга, Издательство «Знание», Москва, 1964, стр. 14.

է դառնում մի կարևոր հանգամանք. այն ի սկզբանե չի կարող այդպիսին ընկալվել առանց հետևյալ երեք բաղադրիչների գրագետ և ներդաշնակ փոխկապակցվածության՝ խոսք, պատկեր, գրքի նյութական կառուցվածք: Այս երեք գործոնները կարելի է վերլուծել նաև առանձին-առանձին՝ հաշվի առնելով, սակայն, իրական կյանքում նրանց անքակտելիությունը: Այս հանգամանքը, անշուշտ, չի սահմանափակում նկարչի աշխատանքը և, որ ամենակարևորն է, չի թերագնահատում այն: Եվ որպեսզի նկարիչն ունենա գիրք ազատ «ներխուժելու» իրավունք, առաջին հերթին պետք է գիտակցի այն ահռելի պատասխանատվությունը, որը կրում է հեղինակի, ընթերցողի և, ի վերջո, պատմության առջև: Նկարազարդումը տեքստի «թարգմանություն» չէ: Նկարիչը կարող է և պետք է դառնա համահեղինակ: Նա «մուտք է գործում» գիրք և դառնում ոչ միայն նկարազարդող, այլև մեկնաբանող, ով կոչված է բացահայտել տեքստը նորովի՝ նոր նրբերանգներ և հնչեղություն հաղորդելով դրան: Չնայած այս ամենին, նկարչի ազատությունը չպետք է ընկալվի որպես կամայականություն տեքստի հանդեպ: Նկարազարդելով տվյալ ստեղծագործությունը՝ նկարիչը, նյութի կույր վերարտադրությունից խուսափելուց զատ, պետք է իր աշխատանքում ցույց տա կարդացածի հանդեպ սեփական վերաբերմունքը, ընթերցողին հրամցնի իր անհատական ստեղծագործական մեթոդն ու ոճը: Այսպիսով, հրատարակված միևնույն գրքի տասնյակ տարբերակներում պետք չէ փնտրել լավ կամ վատ, հաջողված կամ անհաջող նկարազարդումներ, այլ յուրաքանչյուրը (խոսքն իհարկե պրոֆեսիոնալ աշխատանքների մասին է) ընկալել տվյալ նկարչի տվյալ ժամանակահատվածին բնորոշ ստեղծագործական ոճի շրջանակներում՝ իրավունք տալով դրանցից յուրաքանչյուրին լինել տարբեր:

Մանկական գրքի նկարազարդման զարգացման պատմությունը մեծապես կապված է հենց մանկական գրականության էվոլյուցիայի և ձևավորման հետ: Երեխաների համար նախատեսված գիրքը պետք է հետևյալ հիմնական գործառույթները կատարի՝ ճանաչողական, դաստիարակչական և գեղագիտական: Մեծահասակների համար նկարազարդման ճանաչողական լինելը պարտադիր և անհրաժեշտ պայման չէ, որովհետև տվյալ դեպքում ընթերցողն արդեն ունի որոշակի գիտելիքներ, փորձ և ձևավորված սեփական ճաշակ: Երեխաների դեպքում գիրքը դառնում է գեղագիտականն ու գեղեցիկը սիրելու և

ճանաչելու ճանապարհ: Այս հարցում նկարազարդման դերը հաճախ պակաս կարևոր չէ, քան տեքստինը: Նկարիչը դառնում է համահեղինակ, պատկերի միջոցով բացահայտում ստեղծագործության հիմնական միտքն ու ասելիքը, այդկերպ նաև ստանում երեխայի հոգեբանության վրա ներազդելու հնարավորություն՝ հաշվի առնելով երեխայի տարիքը, հետաքրքրությունները, հնարավորությունները, հակումները, սերը դեպի խաղերը, երևակայականն ու կախարդականը: Պետք է նշել, որ գրքում նկարազարդումների առկայությունը կարևորագույն նշանակություն ունի հատկապես երեխաների համար. գրքում զետեղված յուրաքանչյուր պատկեր առանձնահատուկ ուշադրության է արժանանում նրանց կողմից:

Խոսելով մանկական գրքի նկարազարդման մասին՝ պետք է ընդգծել դրա առանձնահատկություններն ըստ տարիքային խմբերի: Պետք է հաշվի առնել, որ մանկական գրքի նկարազարդումներն ուղղված են նրանց, ովքեր դեռևս ապրում են խաղերի, արկածների և զվարճանքների լուսավոր աշխարհում: Օգնելով երեխային հասկանալ, ըմբռնել գրական ստեղծագործությունը, զարգացնելով նրա մեջ գեղագիտական ճաշակ՝ նկարիչը, կարծես, մեխանիկորեն մասնակցում է նրա ընդհանուր դաստիարակչական պրոցեսին՝ ակտիվորեն ազդելով նրա աշխարհայացքի ձևավորման վրա: Անկախ այն հանգամանքից, թե երեխաների հատկապես որ տարիքային խմբին է պատկանում տվյալ գիրքը կամ կոնկրետ ստեղծագործությունը, նրանում տեղ գտած նկարազարդումներում պետք է լուծվի կարևորագույն խնդիր. իրականության ռեալ արտացոլում, առարկաների և տարածության, հերոսների և միջավայրի ներդաշնակ փոխհարաբերություն: Սրանք այն բաղադրիչներն են, որոնք կօգնեն կենդանի հետաքրքրություն առաջացնել փոքրիկ ընթեցողի մեջ: Պետք է ձգտել հասնել տեքստի և պատկերի ընկալման ամբողջականության, ինչի արդյունքում թե՛ գրողը և թե՛ նկարազարդողը կօգնեն պատանի ընթերցողին ընկալել ստեղծագործության բովանդակությունը, պատկերացնել հերոսների արտաքին տեսքն ու միջավայրը և արդյունքում ինքնուրույն հասկանալ և գնահատել կարդացածը:

Նկարազարդման միջոցով երեխան սկսում է ճանաչել իրեն շրջապատող կենդանական ու բուսական աշխարհը, մարդկանց՝ իրենց հետաքրքրություններով, արտաքին տեսքով, բնավորությամբ,

կենցաղավարությամբ: Այդ իսկ պատճառով նկարիչը, մանկական գրականություն նկարազարդելով, պետք է մեծագույն պատասխանատվություն զգա: Օրինակ՝ եթե ստեղծագործությունը պատմական որոշակի իրադարձության է նվիրված, կամ գործողությունները տեղի են ունենում պատմական այս կամ այն կոնկրետ ժամանակահատվածում կամ նույնիսկ այլ մոլորակում, հեքիաթային, ոչ իրական, ֆանտաստիկ միջավայրում, կամ գրական ստեղծագործությունը հստակ արտահայտված ազգային, էթնիկ տարրերի նկարագրություն է պարունակում, ապա լրջորեն պետք է ուսումնասիրել տվյալ պատմական շրջանին, ազգին կամ մշակույթին բնորոշ բոլոր յուրահատկությունները՝ ճարտարապետությունը, կենցաղի իրերն ու առարկաները, հագուստը և այլն: Կարևորագույն խնդիր է նաև հերոսի և միջավայրի փոխհարաբերությունը, որովհետև պատկերվող հերոսին բնորոշում է ոչ միայն իր սեփական արտաքին տեսքը, այլև միջավայրը: Գրքի հերոսի սովորությունների, առավելությունների և թերությունների, մասնագիտության կամ, առհասարակ, ցանկացած բնույթի հետաքրքրությունների, տարիքի, ազգային պատկանելության մասին կարող են խոսել իրեն շրջապատող իրերն ու միջավայրը: Նկարազարդողը լավագույնս պետք է կարողանա կենդանացնել, շնչավորել միջավայրը, հետևաբար նաև այդ միջավայրում ապրող մարդուն: Մեծահասակները նկարազարդումն ընկալում են որպես իրողություն, երեխաները, սակայն, ոչ միայն տեսնում են ավարտուն պատկեր կամ կերպար, այլև նկարն ավարտում են իրենց երևակայության մեջ:

Նկարազարդումը չպետք է սահմանափակվի հստակ ընտրված չափի մեջ. թղթի չափը պետք է ոչ թե շրջանակի նկարը, այլ, ընդհակառակը, պայմանականորեն ծառայի որպես «պատուհան», որից ներս ևս մի մեծ ու նոր, դեռևս չբացահայտված աշխարհ ու պատմություն կա: Վլադիմիր Անդրեևիչ Ֆավորսկին մի առիթով երեխաների խաղալիքների վերաբերյալ նման կարծիք է արտահայտել, որը կարելի է օգտագործել նաև մանկական գրքի նկարազարդման դեպքում. «Ինչ է պետք անել խաղալիքների հետ, որպեսզի նրանք կենդանանան. նրանք պետք է հայտնվեն երեխայի հետ նույն տարածքում»[1]: Այսինքն՝ ոչ միայն կերպարները, այլև նույնիսկ անշունչ առարկաները մանկական գրքի նկարազարդումներում պետք է կենդանանան, իսկ

1 https://imwerden.de/pdf/favorsky_literaturno-teoreticheskoe_nasledie_1988__ocr.pdf

կենդանիները՝ առավել մարդակերպ դառնան: Երեխաներն ուզում են դառնալ նկարում տեղի ունեցող իրադարձության մի մասը՝ հաճախ նույնացնելով իրենց պատկերված հերոսի կամ նույնիսկ հերոսների հետ: Հետևաբար ցանկալի չէ պատկերել իրերն ու առարկաները կամ նույնիսկ կենդանիներին ճիշտ այնպես, ինչպես նրանք գոյություն ունեն իրական կյանքում, այլապես երեխայի աչքերում նկարը կդառնա անշունչ, անհետաքրքիր և ձանձրալի:

Գրքի նկարազարդումների բաժանումը «մեծերի» և «փոքրերի» երբեմն խիստ պայմանական է: Բացի այդ, երեխաներին իրենց հերթին պետք է բաժանել հետևյալ ենթախմբերի՝ նախադպրոցական տարիքի, դպրոցական և դեռահաս: Եթե նախադպրոցական և դպրոցական հասակում երեխան դեռևս նոր է սկսում ճանաչել իրեն շրջապատող աշխարհը, ապա դեռահասներն արդեն կյանքի վերաբերյալ որոշակի, հասուն ընկալում ունեն: Հետևաբար նրանց դեպքում գիրքը թե՛ իր բովանդակությամբ, թե՛ արտաքին տեսքով ու ձևավորմամբ մոտենում է մեծահասակների համար նախատեսված գրքերին և գրեթե ոչ մի ընդհանրություն չունի մանկական գրքի հետ:

Փորձելով ընդհանրացնել վերը նշվածը՝ կարելի է տալ հետևյալ սահմանումը. մեծահասակների և դեռահասների համար նախատեսված գրքերում կարևոր է տեքստը, իսկ մանկականում՝ առավելապես նկարազարդումը:

Նախադպրոցական շրջանում երեխան գիրքն ընկալում է որպես գեղեցիկ խաղալիք, և գրքի յուրաքանչյուր էջն առանձին-առանձին ինքնուրույն նշանակություն ունի, հետևաբար ցանկալի է, որ նկարազարդված լինի գրքի յուրաքանչյուր բացվածք: Պետք է մեծապես կարևորել նաև տառատեսակը, մեծ նշանակություն տալ դրա ընտրությանը, որպեսզի այն համահունչ լինի պատկերին, որի շնորհիվ տեքստն ու նկարազարդումը կընկալվեն իբրև մի ամբողջականություն: Մանկական գիրքը պետք է ունենա գունագեղ, նույնիսկ նկարազարդման վերածված գլխատառեր և ենթավերնագրեր, ճիշտ ընտրված ոճով «նկարված» տեքստ: Տեսնելուց զատ, երեխան պարտադիր պետք է նաև տպավորվի այն ամենով, ինչ տեսնում է: Նրանց պարագայում առաջնային է նաև գրքի ընդհանուր տեսքը: «Մանկական գիրքը, անշուշտ, պետք է լինի որակյալ, անչափ գունեղ, արտաքնապես գրավիչ, հանդիսավոր, տոնական և բոլոր իրավունքներն ունենա լինելու շքեղ»[1]:

1 https://imwerden.de/pdf/favorsky_literaturno-teoreticheskoe_nasledie_1988__ocr.pdf

Այս տարիքային խմբի համար նախատեսված գրքերում տեքստը կարող է անգամ շատ քիչ տեղ զբաղեցնել և հանդես գալ ընդամենը որպես նկարի մեկնաբանություն: Դրանք գրքեր են, որոնցում պատկերները ֆիլմի կադրերի պես փոփոխվում են՝ լրացնելով մեկը մյուսին: Առավել հաճախ մանկական նկարազարդումներն ունեն հարթապատկերային լուծում. քանի որ երեխաները դեռևս չեն կարող ընկալել պատկերն այնպես, ինչպես մեծահասակները, հետևաբար նկարիչը պետք է հնարավորինս խուսափի նկարազարդման պայմանական լուծումից և անհասկանալիությունից: Երեխան նկարում առաջին հերթին տեսնում է առարկան, իսկ մեծահասակը՝ տարածությունը: Երեխայի համար բարդ է ընկալել պայմանականությունը, նա անպայմանորեն հստակություն և կոնկրետություն է փնտրելու: Պետք է հնարավորինս խուսափել օդային հեռանկարի շատ խիստ ընդգծվածությունից, օրինակ, հեռվում՝ երկրորդ կամ երրորդ պլանում գտնվող մարդկանց և առարկաներին անորոշ կամ որոշ տեղերում միջավայրի հետ ձուլվող ուրվագծով պատկերելուց: Չի կարելի նաև կադրից (տվյալ դեպքում՝ թղթի սահմանից) դուրս թողնել կերպարի կամ առարկայի մի մասը: Յուրաքանչյուր առարկա պետք է պահպանի ի սկզբանե իրեն տրված և իրեն բնութագրող գույնն ու տոնը: Չպետք է խախտել առարկայի արտաքին նկարագիրը՝ կիրառելով խիստ կոնտրաստային լույսուստվեր: Եթե երեխան չի կարող, օրինակ, իր գրքի հերոսի դեմքի մանրամասները տեսնել, ապա ամբողջական նկարը կարող է կորցնել գրավչությունը նրա աչքում: Յուրաքանչյուր հերոս շատ հստակ նկարագիր պետք է ունենա՝ չար կամ բարի, տգեղ կամ գեղեցիկ և այլն: Շատ կարևոր է, թե ինչպես է նկարիչը փոխանցում կերպարի հոգեվիճակը կեցվածքի, ժեստերի, միմիկայի, դեմքի արտահայտության միջոցով: Գրեթե նույն կարևորությունն ունեն և հստակ արտահայտված տրամադրություն պետք է փոխանցեն պատկերում առկա ինտերիերի մաս կազմող բազմապիսի իրերը, անշունչ առարկաները և անգամ բնանկարը: Դրանք բոլորն էլ հավասարազոր մասնակիցներն են այն պատմության, որն ի սկզբանե պատմվում է:

Գոյություն ունի կարծիք, որ երեխաների համար պետք է նկարել այնպես, ինչպես նկարում են հենց իրենք՝ երեխաները: Պատասխանը, իհարկե, միանշանակ չէ: Այս հարցադրումը պարզաբանման կարիք ունի. պետք է ոչ թե կրկնօրինակել երեխային, այլ փորձել նայել աշխարհին և կատարվող երևույթներին նրա աչքերով: Լավ մանկա-

գիրը կամ «մանկական» նկարիչը նա է, ով չի կորցրել և ինչ-որ չափով պահպանել է իր մեջ երեխային՝ իր անկեղծությամբ, անմիջականությամբ ու պարզությամբ: Նկարազարդումը, միևնույն է, պետք է պրոֆեսիոնալ կատարված աշխատանք լինի՝ կոմպոզիցիոն և գունային գրագետ լուծումներով: Այս երկուսի սինթեզը կարող է բարդ թվալ, սակայն նկարազարդողը չպետք է փորձի նկարը դարձնել ստիպողաբար «մանկական»: Երեխային կարելի է համոզել միայն այն դեպքում, երբ նկարիչն ինքն անկեղծորեն հավատում է իր ստեղծածին: Իսկապես, երեխաներին համոզելու համար կարևոր պայման է նկարչի անկեղծությունը:

Արդեն դպրոցահասակ երեխաներին հաճախ դուր չեն գալիս իրենց իսկ նկարած նկարները, ի տարբերություն նախադպրոցականների, որոնց լիովին գոհացնում են իրենց ստեղծագործությունները: Երեխան մեծանում է և հարստացնում իր աշխարհայացքը, աշխարհը ճանաչելու և ընկալելու կերպը: Չնայած իր՝ դեռևս սահմանափակ նկարչական գիտելիքներին, նա սկսում է տարբերել և հասկանալ այն, որ պրոֆեսիոնալ նկարչից վատ է նկարում: Այս տարիքում երեխան, թերթելով գիրքը, փորձում է գտնել կատարելություն և, չնայած դեռ ենթագիտակցական մակարդակում, բայց սկսում է հասկանալ, թե ինչ է ծավալը և տարածությունը, ընկալել համաչափությունները, օրինակ, որ հեռվում գտնվող առարկաները, ի տարբերություն իրեն առավել մոտ գտնվող առարկաների, ավելի փոքր են երևում, հասկանալ, թե ինչ են լույսն ու ստվերը և այլն: Յոթ-ութ տարեկան երեխան արդեն կարող է լուրջ պահանջներ ներկայացնել նկարազարդողին: Սակայն դեռևս անընդունելի են խիստ պայմանականությունները և աբստրակտ արվեստի տարրերը: Միևնույն ժամանակ դպրոցահասակ երեխան ևս դեռ ապրում է հեքիաթով, հետևաբար կախարդականը, երազայինն ու հրաշքը, որի սպասումով երեխան բացում է գիրքը, պետք է նկարազարդողի համար առաջնային լինեն: Զուգահեռաբար պետք է փորձել հումորի, երգիծանքի տարրեր պարունակող կերպարներով, տեսարաններով (իհարկե, եթե գրական նյութը թույլ է տալիս) հարստացնել պատկերը, որովհետև երեխաներին, որպես կանոն, դա շատ հրապուրում է:

Դեռահասների համար նախատեսված նկարազարդումներն ունեն իրենց առանձնահատկությունները: Դուրս գալով հեքիաթներից՝ նրանք տեղափոխվում են հետաքրքրությունների նոր, առավել

արկածային աշխարհ: Գիտելիքները, որոնք նրանք ստանում են թե՛ տանը, թե՛ դպրոցում, զգալի չափով փոխում և հարստացնում են նրանց՝ շրջապատող աշխարհի, տարատեսակ երևույթների և իրերի մասին պատկերացումները: Հետևաբար հետաքրքիր և ճիշտ լուծում ունեցող նկարազարդումը, որը, անխոս, պետք է կրի նաև ճանաչողական բնույթ, կարող է հարստացնել պատանու աշխարհայացքը՝ դառնալով նրա համար նոր գիտելիք և տեղեկատվություն ստանալու աղբյուր: Այս դեպքում հնարավորինս պետք է խուսափել պատկերի կոմպոզիցիոն չարդարացված ծանրաբեռնվածությունից և բազմաֆիգուրայնությունից: Նկարազարդումը պետք է ներկայացնի թեմայի կուլմինացիոն պահերն ու առավել հետաքրքիր հանգուցալուծումները: Նկարազարդումն այս դեպքում առավելապես «կամերային հնչողություն» պետք է ունենա: Կարևորագույն խնդիր է այուժեն բացահայտել, հերոսների բնավորության առանձնահատկությունները ընդգծել լակոնիկ լուծումների վրա արված շեշտադրումներով:

Խոսելով երեխաների, հատկապես նախադպրոցական և ցածր դասարանների երեխաների համար նախատեսված գրքերի (թե՛ առանձին նկարազարդումների, թե՛ գրքի ընդհանուր ձևավորման) մասին՝ չի կարելի շրջանցել գույնի և դրա ազդեցության դերը: Մեծահասակները կարող են ամբողջությամբ ընկալել սև-սպիտակ նկարազարդումները, քանի որ ունակ են ենթագիտակցորեն տարանջատել առարկան բնութագրող երկու կարևոր հասկացություն՝ ֆորմա (ծավալ) և գույն: Երեխաների պարագայում խնդիրը մի փոքր այլ է: Նրանց համար այս երկու հասկացություններն անբաժանելի են. յուրաքանչյուր առարկա երեխայի համար ընկալելի և ճանաչելի է իրեն բնորոշ բոլոր հատկությունների ամբողջության մեջ: Նկարազարդման մեջ գույնն ունի օգնող նշանակություն և կրում է բացառապես պատկերի արտահայտչականությունն ընդգծելու գործառույթ (միևնույն ժամանակ նկարազարդումը կարող է չընկալվել իբրև գեղանկարչական աշխատանք): Նման նկարազարդման առանձնահատկությունն ու տարբերությունը գեղանկարչականից այն է, որ գույնն այստեղ դառնում է խիստ պայմանական, նույնիսկ այս կամ այն նպատակով «հորինված» նկարչի կողմից. այն կարող է ոչ մի ընդհանրություն չունենալ իրականության մեջ մեզ հայտնի տվյալ առարկան կամ երևույթը բնորոշող գույնի հետ: Թե ինչպիսի գույն, գունային տոն կամ գույնի հագեցվածություն, պայծառություն և

լուսավորության աստիճան օգտագործել նկարի մեջ՝ կարող է ընտրվել խիստ զգայական մակարդակի վրա: Սակայն գոյություն ունեն բնության կողմից մեր մեջ դրված և կյանքի փորձով հաստատված գույնի ընկալման և ազդեցության օրինաչափություններ, ինչպես, օրինակ, այն, որ սառը գույները կարող են հեռավորության տպավորություն թողնել (այսինքն՝ եթե առարկան սառը գույն ունի, կարող է թվալ, որ նա հեռվում է գտնվում): Եվ հակառակը՝ տաք գույները կարող են օգնել առարկաներին առավել մոտ թվալ և տեսողականորեն մեծացնել դրանց ծավալը: Սևը և սպիտակը չեզոք գույներ են, սակայն սպիտակը, օրինակ՛ տեսողականորեն մեծացնում է տարածությունը, իսկ սևը՝ փոքրացնում: Վերջինս նաև հանդիսավորության և խստության տպավորություն է թողնում, իսկ սպիտակը՝ ազատության, լույսի և մաքրության: Տաք դեղինը, նարնջագույնն ու կարմիրն ասոցացվում են դրականի, երջանկության և ուրախության հետ (չնայած կարմիրը երբեմն նաև անհանգստություն կարող է խորհրդանշել): Մանուշակագույնը, կապույտը ասոցացվում են միայնության և տխրության հետ, կանաչը՝ խաղաղության, հանգստության: Իհարկե գույնի ազդեցությունը կարող է փոփոխվել՝ կախված այն հանգամանքից, թե ինչպիսի այլ գույնի կամ գույների հետ է այն փոխհարաբերվում: Այս ամենի հետ մեկտեղ պետք է փաստել, որ գրեթե միշտ գույնն ընկալվում է ենթագիտակցական մակարդակում, հետևաբար յուրաքանչյուր նկարազարդող գույնը ճիշտ և տեղին մատուցելու իր բանաձևը կարող է ունենալ:

Փորձելով ամբողջացնել վերը նշվածը՝ կարելի է ընդգծել, որ մանկական գրքի նկարազարդումը նկարազարդման հատուկ տեսակ է, որը պետք է օգնի երեխային տեսնել ու ընկալել աշխարհն առավել յուրահատուկ, խոր և լուսավոր: Այն լրջագույն ազդեցություն ունի երեխայի դաստիարակության, ճանաչողության, էմոցիոնալ և գեղագիտական աշխարհընկալման ձևավորման վրա: Հետևապես այս ամենը լուրջ պահանջներ է դնում նկարազարդողի առջև, ով հանձն է առնում ստեղծել մանկական գրքի նկարազարդումներ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. А. Д. Гончаров, Художник и книга, Издательство «Знание», Москва, 1964.
2. Е. Адамов, Иллюстрация в художественной литературе, Государственное издательство «Искусство», Москва, 1959.
3. «Искусство и Книги», Издательство «Искусство», выпуск третий, Москва, 1962.
4. В. Н. Ляхов, «Искусство книги», Советский художник, Москва, 1978.

SUMMARY
The Peculiarities of Children's Book Illustration

Amalya Vardanyan
Lecturer at NUACA

The article is aimed at discovering the peculiarities of children's book illustration taking into account its significance, the importance of its educative, cognitive and aesthetic influence on the newly forming person who tries to discover the world by him/herself. The technical and aesthetic peculiarities are emphasized here that distinguish the illustration of children's works from illustrations of books for adults.

Key words: *Children's literature, book, illustration, age group, illustrator, protagonist, fairy tale, imaginative world, schoolchild, teenager, adult.*

РЕЗЮМЕ
Особенности оформления детской книги

Амалия Варданян,
преподаватель в ААСНУ

Целью статьи является выявить особенности оформления детской книги, принимая во внимание ее уникальную роль в формировании познавательных, воспитательных, эстетических взглядов маленького человека. Здесь исследованы исполнительские и художественные нюансы, различаюшие методы оформления литературы для взрослых и книг для детей.

Ключевые слова. *Детская литература, книга, иллюстрация, возрастная группа, иллюстратор, герой, образ, сказка, воображаемый мир, школьный, подросток, взрослый.*